

Թալու անդրաժողովային հաւատացելոց, պատերազմներու փոթորկաց մէջ պատեալ պաշարեալ են, եւ բնաւ պատեհութիւն չընծայուիր մեզի փութով եւ ճոխարար օգնել կարենալու վերոյիշեալ թագուհւոյն եւ իւր թագաւորութեանն ըստ պահանջելոյ հարկին: Սակայն այսու հանգերձ սոյն գործոյն նկատմամբ մեր ազաչանքը մատուցինք սիրեցեալ որդւոց՝ ազնուատոհմ իշխանին Անտիոքայ վարչի Կիպրոսի թագաւորութեան, ինչպէս նաեւ Վենետաց ու Յանուացեոց Դուքսերուն, եւս եւ երուսաղէմի Հիւրանոցին Մագիստրոսին ու ժողովոյն. իսկ երբ Ձեր մեծափառ Տէրութիւնը եւ վերոյասացեալք կամ ուրիշներն ի նպաստ յիշեալ թագաւորութեան կարեւոր պատրաստութիւն մը կազմել հանգերձել ուղենան, մենք պատրաստ ենք յօժար կամօք չնորհելու սոյնպիսի պարագայից մէջ սովոր եղած ներողութիւնը: Հարկ չկայ որ մենք ազաչներ կամ յորդորենք Ձեր բարձրապատիւ Տէրութիւնը սոյնօրինակ օգնութիւն մը հայթայթելու, վասն զի այնպէս կը համարինք որ Դուք ամենքէն աւելի այս բանիս յօժարամիտ էք ըստ Ձեր կարողութեան. սակայն պատշաճ պիտի ըլլար՝ որ ասանկ մեծ գործ մը օգտակարապէս յառաջ տանելու համար նկատմամբ այնքան բազմաթիւ եւ հեռաւոր ժողովրդոց, գտնուէին այս բանիս յարմար միջանի ինքնայօժար ու փոյթեռանդն հողաբարձուներ, որոնց մասին Ձեր վեհափառ Տէրութիւնն ըստ արժանւոյն հարկ եղածը կը տնօրինէ. միանգամայն եւս հարկ է զրդել՝ ազաչել եւ համոզել սոյնպիսի օգնութեան մը համար մեր սիրեցեալ որդին ի Քրիստոս Հունգարիոյ Լուգովիկոս ականաւոր թագաւորն, Ձեր եւ վերոյիշեալ թագուհւոյն ազգականն, որուն Տէր Աստուած մեծ զօրութիւն պարգեւած է թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ: Բայց որովհետեւ նոյն Արքեպիսկոպոսն ի մէջ այլոց յայտարարեց մեզի, եւ շատ իսկ հաւանական կը թուի որ մեծապէս օգտակար պիտի ըլլայ ըսելիքնիս վերոյիշեալ թագուհւոյն ինչպէս նաեւ իւր հպատակաց պատուոյն՝ վիճակին ու ազատութեանը, թէ նոյն թագուհին Արեւմտքէն ամուսին մ'առնու իրեն՝ քաջազարմ, արիասիրտ, մեծանձն եւ զօրաւոր անձ մը, որ եւ ատակ ըլլայ վերըստին ձեռք բերելու՝ պաշտպանելու եւ կառավարելու իւր թագաւորութիւնն. որ բանին յիրաւի շատ օգտակար ըլլալուն համոզուած ենք, եթէ սոյնպիսի անձ մը կարենայ գտնուիլ. արդ մաքերնուս մէջ յեղեղելով այլեւայլ մեծամեծ ու պատշաճաւոր անձնաւորութիւններ՝ կը ներկայանայ մեզ սիրելի որդին ազնուազարմ Ոթոն Պրունսլիքի Դուքսն՝ կայսերական ցեղէ Սաքսոնիոյ Ոթոններուն, ազգական սի-